Հաճախորդի ուղեցույց իմ

Անհատական ծրագրի պլանի համար

Alta California
Regional Center

Բովանդակություն

Հապավումների բառարան.....էջ

Ի՞նչ է Անհատական ծրագրի պլանը (IPP):.....էջ3

Որո՞նք են այն բաները, որոնք ես կտեսնեմ
իմ IPP-ում:.....էջ3

Որո՞նք են այն բաները, որոնք ես կտեսնեմ
Alta California Regional Center-ի իմ IPP-ում:.....էջ4

Ֆինանսական նպաստներ և այլ եկամուտներ.....էջ 5

Ընդհանուր ռեսուրսներ.....էջ 6

Ավանդական ծառայություններ և աջակցություն.....էջ 7

Համաձայնություն և անհամաձայնություն.....էջ 7

Ծառայության համակարգողի հաստատումներ.....էջ 9

Ծանուցումներ և խորհուրդներ.....էջ 10

Հասանելիություն.....էջ 13

Ավարտել իմ IPP-ն.....էջ 14

Հապավումների բառարան

ACRC - Alta California Regional Center

CCS - Կալիֆորնիայի մանկական ծառայություններ

EPSDT - Վաղ և պարբերական զննում, ախտորոշում և բուժում

HCBA Հրաժարում - Տնային և համայնքային այլընտրանքներից հրաժարում

IHSS - Տնային աջակցության ծառայություններ

IPP - Անյժհատական ծրագրի պլան

NOAs - Գործողությունների մասին ծանուցումներ

SC - Ծառայությունների համակարգող

SSA - Սոցիալական ապահովություն

SSI - Ապահովագրական լրացուցիչ եկամուտ

SSP - Նահանգային հավելավճար

UCI - Հաճախորդի եզակի նույնականացման համար

Ի՞նչ է Անհատական ծրագրի պլանը (IPP):

Անհատական ծրագրի պլանը կամ IPP-ն, ինչպես այն հաճախ անվանում են, իմ ապագայի պլանն է: Այն պատմում է մարդկանց այն մասին, թե ով եմ ես և ինչ եմ ուզում անել: Այն նկարագրում է իմ ուժեղ կողմերը, ներառյալ այն, ինչ կարող եմ ես անել: Այն ներառում է իմ ապագայի հույսերն ու երազանքները: Այն նաև պատմում է իմ նպատակներին հասնելու համար ինձ անհրաժեշտ աջակցության մասին: Alta California Regional Center-ից (ACRC) իմ ծառայության համակարգողը կօգնի ինձ պատրաստել իմ IPP-ն:

Որո՞նք են այն բաները, որոնք ես կտեսնեմ իմ IPP-ում:

Յուրաքանչյուր IPP-ն կներառի.

Նպատակներն այն բաներն են, որոնց վրա ես ուզում եմ աշխատել:

Նպատակները ճանապարհներ են՝ տեսնելու, արդյոք ես առաջընթաց եմ գրանցում, քայլեր, որոնք պետք է անեմ՝ նպատակներին հասնելու համար:

Ծառայություններն ու աջակցությունն այն բաներն են, որոնք պետք է օգնեն ինձ:

Գնահատումները տեղեկատվություն են, որոնք խոսում են իմ ուժեղ կողմերի և կարիքների մասին: Սրա մասին կարելի է խոսել իմ հանդիպման ժամանակ, հասկանալու համար, թե որտեղ եմ ես, արդյոք դա մեկնարկային կետ է իմ նպատակի համար: ACRC-ն սա անվանում է Ընթացիկ կարգավիճակ:

Որո՞նք են այն բաները, որոնք ես կտեսնեմ Alta California Regional Center-ի իմ IPP-ում:

Հաճախորդի եզակի նույնականացման համարը (UCI#) յոթ (7) նիշանոց թիվ է, որը ACRC-ը օգտագործում է՝ համոզվելու համար, որ իմ մասին տեղեկությունները պահվում են իմ ֆայլում կամ գրառումներում: Այն օգնում է, եթե ինչ-որ մեկը նույն անունն ունի ինչ որ ես: Ես միակն եմ իմ UCI համարով:

Բնական աջակցություններն՝ ընտանիքն ու ընկերները, իմ կյանքի մի մասն են կազմում: Նրանք կարող են օգնել ինձ ինչ-որ բաներում կամ ներգրավվել այլ ձևերով:

Ընդհանուր, մասնավոր և այլ ռեսուրսները ծառայություններ են, որոնք ստանալու համար պարտադիր չէ լինել տարածքային կենտրոնի հաճախորդ: **Ընդհանուր ռեսուրսները** ծառայություններ են, որոնք հասանելի են բոլորի համար: **Մասնավոր ռեսուրսները** ներհատուկ են միայն ինձ, ինչպես իմ ապահովագրությունը (առողջապահությունը), եթե ես կամ իմ ծնողները վճարում ենք դրա համար, կամ ես ստանում եմ այն աշխատավայրից: Որոշ ընդհանուր ռեսուրսներ վերանայվում են՝ համոզվելու համար, որ ես ստանում եմ ինձ անհրաժեշտ բաները: Իմ ծառայության համակարգողը կխոսի ինձ հետ՝ հասկանալու համար, արդյոք ես կկարողանամ ստանալ այնպիսի բաներ, ինչպիսիք են առողջապահությունը և ֆինանսական նպաստները:

Ֆինանսական նպաստներ և այլ եկամուտ

Ֆինանսական նպաստները և այլ եկամուտներն այն միջոցներն են, որոնցով ես գումար եմ ստանում՝ վճարելու այն բաների համար, որոնց կարիքն ունեմ և ցանկանում եմ:

Որոշ ընդհանուր ֆինանսական նպաստներ, որոնք կարող են ստանալ տարածքային կենտրոնի հաճախորդները, հետևյալն են.

Լրացուցիչ ապահովության եկամուտ (SSI) – եթե հաշմանդամ եք և չեք կարողանում աշխատել այնքան, որպեսզի վճարեք ձեր կարիքների համար, կարող եք ստանալ SSI:

SSI/Նահանգային հավելավճար (SSP) - Եթե դուք ստանում եք SSI, դուք նաև որոշակի գումար կստանաք նահանգից:

Սոցիալական ապահովություն (SSA) - Եթե ձեր ծնողներն աշխատել են և ստանում են Սոցիալական ապահովություն, դուք նույնպես կարող եք ստանալ Սոցիալական ապահովություն:

Նահանգային հավելավճարի (SSP) վերականգնում - տարածքային կենտրոնը կարող է վճարել, եթե դուք ստանում եք SSI և ապրում եք ինքնուրույն:

Վաստակած եկամուտն այն գումարն է, որը ես ստանում եմ աշխատելու համար:

Առողջապահական ծածկույթն է վճարում իմ բժշկական կարիքների համար, օրինակ՝ բժշկի այցելելը կամ իմ ընդունած դեղերը: Սա կարող է լինել Medi-Cal-ը կամ Covered California:

Ընդհանուր ռեսուրսներ

Կրթությունն այն դպրոցն է, որը ես հաճախում եմ, քանի դեռ սովորում եմ:

IHSS-ը ներառված է տնային աջակցության ծառայություններում, որը իմ Վարչաշրջանը վճարում է ինչ-որ մեկի համար, ով ինձ կօգնի այնպիսի անհրաժեշտ բաներով, ինչպիսիք են գնումներ կատարելը, ճաշ պատրաստելը և հագուստս լվանալը:

EPSDT-ը վաղ և պարբերական զննում, ախտորոշում և բուժում է, որը կարող է ապահովել բուժքույրական խնամքի ժամեր և այլ բաներ, եթե ես մինչև 21 տարեկան եմ և օգտվում եմ Medi-Cal-ից:

CalFresh-ը քարտ է, որը կարող եմ օգտագործել սննդի դիմաց վճարելու համար:

CCS-ը Կալիֆորնիայի մանկական ծառայություններն են, որոնք կարող են օգնել ինձ, եթե ես մինչև 21 տարեկան եմ և կարիք ունեմ թերապիայի կամ սարքավորումների, օրինակ՝ անվասայլակ կամ քայլակ:

HCBA Հրաժարումը տնային և համայնքային այլընտրանքներից հրաժարում է, որը կարող է ապահովել բուժքույրական խնամքի ժամեր և այլ բաներ, եթե ես 21 տարեկանից բարձր եմ և օգտվում եմ Medi-Cal-ից:



Ավանդական ծառայություններ և աջակցություն

Ավանդական ծառայությունները և աջակցությունը այն բաներն են, որոնց համար վճարում է տարածաշրջանային կենտրոնը, որպեսզի օգնի ինձ հասնել իմ նպատակներին: Իմ IPP-ն ցույց կտա բոլոր ծառայությունները, որոնք ես ստանում եմ տարածաշրջանային կենտրոնից և կասի, թե որքան ծառայություն պետք է ստանամ և երբ այն պետք է սկսվի:

Համաձայնություն և անհամաձայնություն

Ես կարող եմ տեղեկացնել իմ ծառայության համակարգողին, որ համաձայն եմ իմ ծրագրի հետ:

Ես կարող եմ տեղեկացնել իմ ծառայության համակարգողին, որ համաձայն եմ իմ ծրագրի որոշ մասի, բայց ոչ ողջ ծրագրի հետ:

Վիճելի ծառայությունները այն բաներն են, որոնք ես ցանկանում եմ ունենալ իմ IPP-ում, որոնք սակայն չեմ ստացել: Այս ծառայությունները կթվարկվեն, և տարածաշրջանային կենտրոնը ինձ կուղարկի տեղեկատվություն իրենց որոշման և իմ իրավունքների մասին, սա կոչվում է Գործողությունների ծանուցում (NOA):

Ես նաև տեղեկություն կստանամ, թե ինչպես խնդրել, որ ինչ-որ մեկը վերանայի որոշումը, սա կոչվում է բողոքարկում: Ես կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ստանալ բողոքների մասին Alta California Regional Center-ի կայքում:



Եթե ես համաձայն չեմ իմ ծրագրի որևէ մասի հետ, տարածաշրջանային կենտրոնը պետք է նորից հանդիպի ինձ հետ 15 օր հետո: Ես ստիպված չեմ նորից հանդիպել, եթե չեմ ցանկանում: Եթե ցանկանամ, կարող եմ նորից հանդիպել 15 օր հետո:

Ծառայությունների հասանելիության ուսումնասիրությունն այն է, ինչ ցանկանում եմ ունենալ իմ IPP-ում, բայց որոշելու համար ինձ ավելի շատ տեղեկություններ են անհրաժեշտ: Իմ ծառայության համակարգողը կստանա ինձ անհրաժեշտ ավելի շատ տեղեկատվություն ծառայության մասին: Մենք կընտրենք ամսաթիվ, երբ իմ ծառայության համակարգողը կտրամադրի ինձ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Համաձայնել մերժվող/առաջարկվող դադարեցման կամ կրճատման հետ - Մերժումն այն է, ինչ ես ցանկանում եմ ունենալ իմ IPP-ում, սակայն ես դեմ չեմ, որպեսզի դրանք չներառվեն: **Դադարեցումն** այն է, ինչ եղել է իմ IPP-ում, սակայն ես համաձայն եմ, որ լավ կլիներ այն դադարեցնել: **Կրճատումներն** ձայն ծառայություններն են, որոնց ավելի քիչ ստանալուն ես համաձայն եմ:

Ծառայության համակարգողի հաստատումներ

Ոսումնասիրել անցումը դեպի Ինքնորոշման ծրագիր (SDP) նշանակում է, որ ես ցանկանում եմ ընտրել իմ սեփական ծառայությունները և մտակարարներին, որոնք հնարավոր է, որ չեն համագործակցում տարածաշրջանային կենտրոնի հետ: Այն ինձ թույլ է տալիս ընտրել, թե ում եմ ցանկանում տրամադրել իմ ծառայությունները:

Ծառայության համակարգողի (SC) հաստատումներն այն բաներն են, որոնց մասին ինձ հայտնել է իմ Ծառայությունների համակարգողը:

Ծառայությունների հաստատումներն այն բաներն են, որոնց համար վճարել է Alta California Regional Center-ը (ACRC): Ես ստանում եմ սա, որպեսզի կարողանամ համոզվել, որ ստանում եմ այն, ինչի համար վճարում է ACRC-ն:

Առողջության նպաստների քարտը իմ ապահովագրական քարտն է: Ես սա հայտնում եմ, որպեսզի ACRC-ն իմանա, թե ինչ կարող եմ ստանալ իմ ապահովագրությունից:

Ներկա կամ ապագա կարիքները և խոչընդոտներն այն բաներն են, որոնք ես ցանկանում եմ ունենալ իմ IPP-ում, որոնց ստանալու համար, հնարավոր է, որ պայքարեմ: Այս մասին խոսվում է, որպեսզի տարածաշրջանային կենտրոնը կարողանա նոր ծառայություններ մատուցել:

Չբավարարված կարիքներն այն բաներն են, որոնց կարիքը հիմա ունեմ, սակայն չեմ կարողանում ստանալ: ACRC-ն կարող է օգտագործել այս տեղեկատվությունը նոր ծառայությունների ստեղծման վրա աշխատելու համար:

Առանձին ապրող մեծահասակների համար IPP-ի վերանայումը պետք է տեղի ունենա յուրաքանչյուր երեք (3) ամիսը մեկ անգամ, եթե ավելի վաղ դրա անհրաժեշտությունը չկա: Ես կարող եմ պահանջել հանդիպել վեց (6) ամիսը մեկ կամ պարզապես ամեն տարի: Այս վերանայումն իրականացվել է, որպեսզի կարողանանք ստուգել՝ հասկանալու համար, թե ինչպես եմ ես հասնում իմ նպատակներին, և արդյոք անհրաժեշտ է որևէ բան փոխել իմ IPP-ում:

Ես կստանամ իմ ստորագրած IPP-ի պատճենը՝ նախքան դրա գործողության սկիզբը:

Ծանուցումներ և խորհուրդներ

Ծանուցումները/խորհուրդներն այն բաներն են, որոնց մասին ինձ հետ խոսել է իմ Ծառայությունների համակարգողը:

Տարեկան IPP հանդիպումներ - Ես կարող եմ խնդրել հանդիպել ցանկացած ժամանակ, ըստ իմ ցանկության, սակայն խորհուրդ է տրվում հանդիպել առնվազն տարեկան մեկ անգամ՝ վերանայելու իմ IPP-ն: Ես ստիպված չեմ սպասել իմ ծննդյան օրվան կամ իմ Ծառայության համակարգողի զանգին: Լավ կլինի հանդիպել, եթե իմ նպատակները կամ կարիքները փոխվեն: Նաև, եթե ես ցանկանում եմ խոսել այն մասին, թե ինչպես են աշխատում իմ ծառայությունները:

Գաղտնիություն - Անձնական տեղեկատվությունը, որը ես կիսում եմ իմ մասին Alta California Regional Center-ի (ACRC) հետ, չի կարող փոխանցվել այլ անձանց՝ առանց իմ համաձայնության: Լինում են դեպքեր, երբ ACRC-ն կարող է կիսվել իմ տեղեկություններով, նույնիսկ առանց իմ համաձայնության: Ինձ համար լավ կլինի իմանալ, թե երբ պետք է ACRC-ն իմ մասին տեղեկություններ փոխանցի ուրիշներին: Այդ դեպքերը ներառում են.

Առողջություն, անվտանգություն, բարեկեցություն - Եթե վնասվեմ, ACRC-ն կարող է կիսվել իմ մասին տեղեկություններով:

Պարտադիր հաշվետվություն - Եթե իմ ծառայության համակարգողն իմանա, որ ինչ-որ մեկն ինձ վնասել է, նրանք այդ մասին պետք է որևէ մեկին ասեն:

Այլ իրավիճակներ - Հնարավոր է, որ այլ դեպքերում իմ ծառայության համակարգողը կամ տարածաշրջանայյին կենտրոնը ստիպված լինեն կիվսել իմ անձնական տվյալներով: Եթե ցանկանում եմ ավելին իմանալ այդ դեպքերի մասին, կարող եմ խնդրել օրենքի պատճենը:

Ծառայության համակարգողի փոփոխություն - Ես ցանկացած պահի կարող եմ պահանջել ծառայության նոր համակարգող: Իմ իրավունքն է ստանալ ծառայության նոր համակարգող, եթե ես այդ մասին խնդրեմ: ՊԵս կարող եմ զանգահարել տարածաշրջանային կենտրոն և խնդրել խոսել իմ ծառայության համակարգողի ղեկավարի հետ:



Բողոքներ - Եթե կարծում եմ, որ ինչ-որ մեկը խախտել կամ մերժել է իմ իրավունքները, կարող եմ տեղեկացնել Alta California Regional Center-ի (ACRC) գործադիր տնօրենին: Նրանք դա կուսումնասիրեն և ինձ կտեղեկացնեն, թե ինչ է տեղի ունեցել: Եթե ինձ դուր չի գալիս տեղի ունեցածը, կարող եմ խնդրել նահանգային ուսումնասիրություն:

Ազդարարման քաղաքականություն - Եթե ես կարծում եմ, որ ինչ-որ մեկը սխալ բան է անում, ես կարող եմ Ազդարարման բողոք ներկայացնել: Բողոք ներկայացնելու հրահանգները կարելի է գտնել Alta California Regional Center-ի վեբկայքում:

Վերականգնում սոցիալական ժամանցի գործունեություն -
Ես կարող եմ խնդրել Alta California Regional Center-ին վճարել հաճելի բաների համար, որոնք ես սիրում եմ անել:

Իմ IPP-ի պատճենը - Ես կստանամ IPP-ի իմ պատճենն՝ իմ հանդիպումից հետո 30 օրվա ընթացքում: Եթե իմ IPP-ում որևէ բան կա, որի հետ ես համաձայն չեմ, կարող եմ խնդրել, որ այն փոխվի:

Իմ ծառայության համակարգողը կքննարկի բոլոր նախորդ **ծանուցումներն ու խորհուրդներն** ինձ հետ:

Հասանելիություն

Մայրենի կամ նախընտրելի լեզու (գրավոր և խոսակցական) - տարածաշրջանային կենտրոնն ինձ տեղեկատվություն կտրամադրի ինձ հասկանալի լեզվով: Օրինակ, եթե ես ցանկանում եմ, որ իմ IPP-ն լինի իսպաներեն, այն կարող է թարգմանվել:

Լրացուցիչ աջակցություն - Տարածաշրջանային կենտրոնն ինձ հետ կշփվի ինձ համար հասկանալի ձևով: Օրինակ, եթե ես ունեմ վատ լսողություն կամ խուլ եմ, կարող եմ լրացուցիչ աջակցություն ստանալ իմ հանդիպման համար:



Գործողությունների մասին ծանուցումների (NOAs) փոստով առաքում - Ես պետք է իմ ծառայության համակարգողին հայտնեմ, թե ինչպես եմ ուզում ստանալ ուղարկվող NOA-ները, երբ մենք համաձայն չենք ծառայությունների հետ: NOA-ն թվարկում է այն ծառայությունները, որոնց շուրջ մենք համաձայնության չենք եկել և տեղեկություններ ունի որոշման և իմ իրավունքների մասին:

Քվեարկություն - Ես քվեարկելու իրավունք ունեմ, և իմ ծառայության համակարգողը կճշտի ինձ հետ՝ տեսնելու՝ արդյոք ես ուզում եմ գրանցվել: Իմ ծառայության համակարգողը կարող է օգնել ինձ գրանցվել քվեարկելու համար, եթե ես ցանկանամ:

էլ.փոստի կոնտակտային տվյալ - Ես կարող եմ իմ ծառայության համակարգողին տալ իմ էլ.փոստի հասցեն, եթե ցանկանամ: Եթե ես էլփոստ չունեմ կամ չեմ ցանկանում այն տրամադրել, ապա ստիպված չեմ: Էլ.նամակը լավ միջոց է՝ տեղեկատվությունն արագ տարածելու համար: Իմ ծառայության համակարգողը ստիպված կլինի գաղտնագրել իմ անձնական տվյալները պարունակող ցանկացած էլ.նամակ: Կոդավորումը նշանակում է, որ այն ապահով և պաշտպանված կլինի, և բացելու համար անհրաժեշտ կլինի գաղտնաբառ:

Իմ IPP հանդիպումն ավարտելու համար...

Ստորագրություններ - Ես և այն մարդիկ, ովքեր օգնում են ինձ ստեղծել իմ IPP-ն, պետք է ստորագրենք IPP-ն: Ես պետք է ստորագրեմ իմ IPP-ն, նախքան դրա մեկնարկը:

Նշումներ

Alta California
Regional Center